

ԾԱՂԻԿ ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՄ ԵՐԵՐԸ ԵՄ
ՄԱՐԿԻՆ 50 ԹԻԼ:

Բաժանորդագրին կԱՆՔԻԿ՝ Թուրքիոյ Համար
տարեկան 50 դրշ, Ռուսիոյ Համար 5 ռուբլի,
ուրիշ երկիրներու Համար 12 ֆր. — Վեցամսեայ
բաժանորդագրութիւն եւս կ'ընդունուի:

Գաւառներէն դրամի տեղ Օսմանեան Նա-
մակադրոշմ՝ եւս կ'ընդունուի:

Միայն երեք թիւ ապառիկ կը զրկուի. այնու-
հետեւ բաժանորդագրին չը վճարողը կը դադրի
թիւթ ընդունելէ:

Ծանուցման տողը 2 զուրուշ:

ԾԱՂԻԿ

Հ Ր Ա Գ Ի Ր

ԾԱՂԻԿԻ ՎԵՐԱԵՐԵՎԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԻԼ
Առ ՏՏՈՐԷՆ-ՀՐԱՊԱՐԱԿԻՅ
ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱՂԱԳԱՇԵԱՆ
Պոլիս, Պաշէ-Կափու, Շէխ-ու-Իսլամ Խան
درعليه ده باچه قوسنده شيخ الاسلام خانده
«زاغيك» غزتمى مديرى بالاقاشيان حوونان
S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien « Dzaghik »,
Bahtché-Kapou, Chéikh-ul-Islam Han
CONSTANTINOPLE

40 Փարս

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 Փարս

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Գ. ՏԱՐԻ. ԹԻԻ 17

Շ Ա Ր Ա Թ

7 ՄԱՅԻՍ 1893

ԽԱՐԱԳՐԱՊՈՅ Ա. Ա. ՍՈՒՐԵՆԵԱՆ

ՄԵՐ ԾՆՈՒՆԳՆԵՐԸ

Վստահելի անձ մը կէտէ յիկի մեր-
ձակայ Սէօլէօղ Հայաբնակ գիւղին վրա-
յօք զանազան տեղեկութիւններ հա-
ղորդած է խմբագրութեանս. ութ հա-
րիւր տունէ աւելի այս գիւղացիք՝ ու-
շիմ, աշխատասէր, խնայող ու ջերմ-
բանդ են առ հասարակ, և սերտիւ յար-
եալ իրենց Մայր Եկեղեցւոյն. մանուկ-
ները կը դաստիարակուին հոն աւելի
խնամով՝ քան չըջակայ քաղաքներու Հայ
վարժարանաց մէջ. իրենց լեզուն և
ուրիշ պիտանի ուսմունք կը մշակուին
այնքան ջանքով՝ որքան կը մշակուի
տեղւոյն բերրի հողը. իրենց նիւթական
վիճակը կրնայ մեր շատ մը քաղաքաց-
եաց նախանձը շարժել. և այսպէս այդ-
օժտեալ բարեհամար շինականք ան-
գործ կ'անցունեն իրենց օրերը:

Այս ըսել չէ սակայն, թէ մտաւոր
արթնութեան առաջին շրջանի մը մէջ
իրենց վաղեմի պարզութիւնն ապակա-
նարար ազդեցութենէ ազատ մնացած
է բոլորովին. մարդիկ գիտութեան ծա-
ռին պտուղէն երբ առաջին անգամ ճա-
շակել սկսին, կ'զգան տարօրինակ ցըն-
ցում մը մտաւոր վիճակի՝ որ եթէ չը
յիմարացներ զիրենք, կրնայ քայքայել
իրենց բարոյական նկարագիրը: Դաս-
տիարակութեան յոռեգոյն եղանակն է
մտքի ամբարին մէջ նետել խառն ի խառ-
ն ծանօթութիւններ, առանց տալու
զանոնք ընտրանք եւ օգտակարապէս
գործածելու կարողութիւնը:

Սէօլէօղի Հայ կանանց մտաւոր արթ-
նութիւնը նոյն տիպի արդիւնքն ունե-
ցած է. չգիտենք ինչպէս, այս տանտի-
կիները յղութեան գծուարութիւններ-
րէն և ծննդաբերութեան տաղանդներ-
րէն ազատ մնալու միջոցը կ'ուսանին
և քանի մը տարւոյ մէջ ծննդոց թիւն
անհամեմատ կը նուազի. մկրտելոց ար-
ձանագրութենէն կը տեսնուի որ տա-
րեկան չորս հարիւր մկրտութեանց թի-
ւը կ'ընչէ մինչեւ հարիւրի, և գիւղին
ծեղերն ու եկեղեցականները սոսկմամբ,
մօրութիւն ձեռք առած, այս երեւոյ-
թիւն վրայ կը խորհին. բարեբաղդաբար

նորընծայ քահանայ մը կը ձեռնարկէ
բառնալ այս ազէտը. լուր օրեր եկեղե-
ցին կը հրաւիրէ կիները, պերճախօս
քարոզներ կուտայ, չարիքը մատնանիշ
կ'ընէ, կ'աղբսէ, կ'արտասուէ, կ'սպառ-
նայ, կը յուսագրէ և Աստուծոյ շնորհը
կը հայցէ իրենց վրայ. յաջորդ տարին
արձանագրութեանց տու մարին մէջ մը-
կըրտեալ մանկանց թիւը չորս հարիւր
եօթանասունն անցած կը տեսնուի. ա-
մէնքն ուրախութեան արտասուք կը
թափեն...

Եւ կը խորհինք թէ, իբր սպասուհի
կամ սանտու, Պոլսոյ կամ Իզմիրի նման
քաղաքներն յաճախող մեծակայ վայ-
րերու Հայ կիներն անփորձ, տգէտ, ա-
քերտն առաջին անգամ բանալով, մեր
մէջ մուտ գտած այս սպառիչ գիտու-
թիւնը կ'ուսանին և իրենց արդասաւո-
րութիւնը կը ջնջեն, կարծելով որ այ-
դու աւելի բարեկեցիկ պիտի ապրին,
նուազ ենթակայ պիտի ըլլան հիւան-
դութեանց: Ծննդոց այս եղանակն նուա-
զութիւնը, ընդհակառակն, կնոջ հա-
մեստութեան զգացումը կը ջլատէ, ա-
մուսնական սիրոյ կապը կը թուլցնէ և,
իւր բաղմապիսի վտանգներն հաշուի չը
գնելով, ընտանեաց նիւթական դար-
գացման ալ արգելք կը յարուցանէ,
մանաւանդ Օսմ. Պետութեան նման եր-
կիրներու մէջ, ուր աշխատող ու ար-
տադրող ձեռքերու այնքան կարօտու-
թիւն կայ:

(Դիտուած է սակայն թէ Պոլսոյ տու-
ներուն մէջ ծառայող Ռօտտութիւնի կա-
նայք ցարդ զերծ մնացած են այս աղե-
տակի ունակութեան անձնատուր լինե-
լէ. իրենց բարոյականի նկատմամբ ու-
նեցած խորին ու երկիւղած յարգանքը,
ամուսնական կենաց անյաղթելի սէրն
ամբակուռ վահանն են իրենց սրտին ու
մտքին և մոլորութենէ զերծ կը պահեն
զիրենք. հարկ է խոստովանիլ, ի պա-
տիւ Ռօտտութիւնի Հայոց, թէ այդ քա-
ղաքի կանայք, պանդխտութեան մէջ,
ամենէն նուազ ենթակայ են պատուոյ
մոռացկոտութեան):

Պոլիս և Իզմիր եղած են գլխաւոր
կեդրոններն ուր կանանց կարեւոր մի-
մասը մայր լինելէ հետեւ կը փախչի:

Տիկին, զաւակներ չ'ունիք, կը հար-
ցունէք չքիզ հագուած գեղանի բարե-
կամ կնոջ մ'որ թանկագին առարկայնե-
րով զարդարուած սրահի մը մէջ կ'ըն-
դունի զձեզ:

«Ի՞նչ կ'ըսէք, զաւակներ ունենալու
ժամանակ է. կենքը մեզ համար դա-
ռն է արդէն. պղտիկները խնամել,
անոնց կերն ու հագուստը հոգալ, կա-
նոնաւոր գպրոցի մը թոշակ վճարել և

յետոյ, երբ մեծնան, գործ գտնել կամ
ամուսնացնել (առանց խորհելու թէ աշ-
խարհ փորձանաւոր ու մահկանացու է,
թէ հիւանդութիւն և մահ կուգան վեր
ի վայր ընել հազիւ ձեռք բերուելիք
խաղաղ օրերը, կամ անհուն ցաւերով
լեցնել մեր սիրտը. ո՛հ, հիմակուան
մարդիկ կրնան այս ամէնուն տակէն
ելնել»:

Եւ հակառակ ձեր համակրութեան
այդ գեղանի տիկնոջ վրայ, կը խորհիք
թէ իր այս պատճառաբանութիւնները
կեղծ են. նա իւր գեղեցկութիւնը պա-
հել, զաւակի հոգերէ ազատ մնալ կ'ու-
զէ. իր մանկութեան ատեն չէ ուսած
թէ ի՞նչ է ամուսնութեան գերագոյն
ու նուիրական նպատակը. չէ զգացած
թէ ի՞նչ բարոյական անկեալ վիճակ մ'է
կնոջ համար՝ ամուսնական անցունել.
չէ լսած թէ աստուածային ու մարդ-
կային խմբատու թիւնք դատապարտած
են պատիւն կնոջ որ անզաւակ կը մնայ.
չէ յորդորուած թէ իւր առողջութիւն-
ն, սուրբ հաճոյքները, ամուսնոյն սէրն
ու յարգանքը վայելելու գլխաւոր գրե-
թէ անվրէպ միջոցն է զաւակներէ չըր-
ջապատուիլը, չէ ուսու մնասիրած թէ
այդ զաւակաց մէջէն թերեւս կրնան
ելնել այնպիսիներ որ պատիւ, պար-
ծանք ու հարստութիւն պիտի բերեն
իրեն: Ոչ, ասոնց և ոչ մին ի նկատ
կ'առնու. իր անփորձ ու տգէտ գլխուն
մէջ գաղափարի մը սերմն ինկած է, այ-
ժմ արմատ բռնած, ուռճացած. — զու-
ւակ չ'ունենալ. և օրինակը, մանաւանդ
չար օրինակը, համաճարակ ախտիւրէ ա-
ւելի շուտ կը տարածուի:

Չկարծենք սակայն թէ մեծ քաղաք-
ներու բնակիչներն անստիւր վարակեալ
են այս կոկիճեցուցիչ մալուխամբ. Գա-
տը գիւղի մէջ, զորօրինակ, ուր Հայ և
Յայն գրեթէ հաւասար թուով միևնոյն
տեղեր կը բնակին, բաղմամբութեան
կողմանէ Յայնք գերազանց են Հայերէն.
Փողոցներու մէջ չըջող կամ խաղացող
տղայոց թիւերուն բաղդատութիւնը կա-
րի շահեկան է... Բայց Յայները թէ՛
գիւրակեցութեամբ և թէ՛ հանգստա-
ւէտ կենցաղով մեղմէ ստորին չեն, ընդ-
հակառակն. — շատ զաւակաց ծնունդն
արգելք չէ իրենց երջանկութեան:

Երանի՜ թէ մեր մօտ ալ քահանայք
ընէին, ինչ որ Սէօլէօղի նորընծայ քա-
հանայն ըրած է իւր գիւղին մէջ. և այ-
սու եկեղեցւոյ ու երկրին յաջողէին մա-
տուցանել փրկարար ծառայութիւն մ'որ
իրենց պարտքն է արդէն:

Ա. Ա. ՍՈՒՐԵՆԵԱՆ

ԿԱՄ ԳԻՒՂԱՅԻ ՄՆԱԼ

ԿԱՄ ԲԱՐԻ ՔԱՂԱՔԱՅԻ ԸԼԼԱԼ

Երբեմն երբեմն սաստիկ պէտք մը կը զգամ խօսելու խօսուելու՝ դեռ լրագիր ձեռնարկին շառնով, կամ հազիւ լրագիր կարգադրու սկսած՝ սակայն այս բարեկենսական խառնակութեան մէջ բան մը հասկընալու անկարող մարդոց հետ։ Ապականութիւնն այդ մարդոց մէջ տարածուած չէ՝ դեռ պարզ մարդիկ, սրտով ալ պարզ, մըտքով ալ պարզ։ Քօլալը շարունակ դեռ վիզերնին չի շարժարեւ, ո՛չ սրածայր նեղ կօշիկն՝ ստուերնին։ ո՛չ ակնոց ունին քիթերնին, ո՛չ ձեռնոց՝ ձեռուերնին։ Օրօրոցէն գերեզման երկնցով ճամբուն վրայ չի շարժարեւ կը քալեն։ Գարձուածներ, կեցուածքներ, ա՛յ ու ու ձախ խոտորումներ ու գեղեցուածներ չունին։ չի շարժարեւ կ'երթան որորոցէն գերեզմաննոց երկնցով ճամբուն վրայ, ճամբուն քարերուն իրենց ոտքէն հանած արեանը խառնուելով իրենց արեւակէզ ճակարին ուն ուն տաք քրտինքը։ Իրենց գրպանը գալար գալար դարձող քսակ մը ունին հալալ վատակի, որուն մէջ կարմրուկ կըրթիլը շատ անգամ չի գըրթիլ՝ այլ որուն տակը տալը փարան միշտ կայ ժամուն համար, աւանդական գանձանակին համար։ Իրենց կոշտ կապած կանակը թանձր կաշի մը ունին, որուն վրայ երկրագործնաբար պիտի վերցընէին՝ եթէ կարենար դրուիլ հոն։ այո՛, ուժերնին այնքան շատ է, վասն զի գնդերը միշտ աշխատութեան մէջ է, միշտ ոտքը ձեռքը կը շարժի այդ ժողովրդային մարդերուն, որոնք ժամուն սուրը աւազանէն մինչեւ հողմարքին հանգիստ փոսը՝ չի շարժարեւ կը քալեն կեանքին ճամբան, քրտինքնին ագամանդի նման փայլուն խոշոր կունդ կաթիլներով կաթելով անթիւ ճակատներէն՝ ու հաստ հաստառաքայլ ստուերնին երբեմն երբեմն զարնուելով ճանապարհին սուր քարերուն քարնդոտներուն։ Իրենց Ասլասի թիկունքին վրայ միշտ բեռ մը կայ մեծ ահագին։ սակայն իրենց հոգւոյն համար այնքան թեթեւ է մեծագոյն բեռը կեանքին, խղճմանքներնուն վրայ բեռ չունին։ Տարաբաղյալը դեռ չէ մտած իրենց մաքին մէջ, ոչ նենգութիւնն՝ իրենց սրտին մէջ, ոչ ալ սեւ յուսահատութիւնն՝ իրենց հոգւոյն մէջ, թուշունն՝ եղանակները ծանուցանելու, հունտերն երկրէ երկիր տանելու ցանցները պաշտօնն աւած է Աստուծոյ։ Գառնն ոչ խարն՝ Աստուծոյ հրամանաւն որ Աբրահամին տուաւ՝ զօղելէն հարուստին և իջելէն պէն աղքատին և մորթին հովիւին նուիրելու սահմանուած է։ Իսկ մարդն անարտուծ աշխատելու, առտուն խաչակնքելով և իրիկուեը ծնրագրելով երկնաւոր հօրը առջեւ, մարդն ոտքով ու ձեռքով աշխատելու համար ծնած է։ մարդը մահկանացու՝ որուն անմահութիւնն է բաժին գերեզմանէն անդին։ Կեանքին ըմբռնումն, արարածոյ կոչումն, անվրէպ խնամասիրութիւնն այն է ժողովրդեան մարդուն համար։

Իսկ որքան տարբեր եղած է մեր ըմբռնումը։ Մեր գաւառներին ճշմարտութեանը վրայ սկսանք տարակուսիլ։ մեր խորհրդով այլ ամբարտաւան մտքին հպատակե-

ցուցինք մեր սիրտը՝ որ սէրէ սէր կ'անցնի թեթեւօրէն և կամ ալ բնաւ սէր զգացում չունի։ մեր հոգիովն ալ այնքան կը զբաղինք՝ որ իրեն համար յատուկ գիտութիւն մը ստեղծեցինք, աւանդելէ յայտարարելով սակայն որ... չենք հաւատար հոգիին գոյութեան ու հետեւաբար հոգիին անմահութեան։ Մեր կեանքն ալ աւելորդ է բնէ՛ համաձայնեցուցինք մեր այս ըմբռնումին։ անհաստատ ընթացք մը կենաց, թեթեւ, հակասական, յեղեղուկ, յիմար։ — Կարգ մը մարդիկ կան, որոնց տարակոյնն ալ յարգուելու արժանի է։ ուրիշին գաւառներին գէմ չեմ հայհոյեւ անոնք, և կը տարակուսին միմիայն՝ դրական ճշմարտութեան հասնելու իրենց միջոց մը համարելով տարակոյնը։ Մասնաւոր արամադրութեամբ մը ու գրական թանձրաթափած արտագրութեանց ազդեցութեամբ վերջ չեն գտներ, աւա՛ղ, իրենց սրտին վրդովմունք։ Իրենց հոգին ալ չը գիտեմ ի՛նչ մտաւորութեամբ մը խրոսովեալ է յարաժամ։ Խնդիրն այդ մարդոց վրայ չէ։ Այդ մարդիկը չէ որ իրեն հակապատկեր մը պիտի ներկայացնեմ հին պարզ ուղիղ մարդիկներուն։ Այդ մարդիկ խղճերնուն վրայ չարագործութեան մը բեռը չունին։ Մարդո՛ւ հօր չի փորեցին. մարդո՛ւ մը դէմ է եկրի չի խորհեցան (ինչպէս որ մեր լրագրագետներուն մէջէն պարծենցողներ կան որ եկրի չի խորհած որ մը չեն կրնար անցանել)։ այդ յուսահատ և խնամասիրական տարակոյնովն համակուած մարդոց վրայ մէկուն տալը փարան չանցաւ։ Թղթախաղի դէմ չը քարոզեցին՝ գիշերը թղթախաղի սեղանին շուրջը լուսնեւելով։ քաղաքային պարկեշտութիւն չի քարոզեցին անոնք՝ քանի մը ոսկի (ու երբեմն քանի մը մէճիտիլի) փոխարէն պատուոյ տէր մարդոց կամ պատկառելի հաստատութեանց վրայ յարձակելով։ սեռային պարկեշտութիւն չի քարոզեցին (1) հրապարակին վրայ՝ մասնաւորներու յայտնելէ յետոյ թէ այս ինչ և այն ինչ գեղանի կիներուն հետ սիրաբանութեան մէջ են։ տոհմային բարոյական չը քարոզեցին՝ աշխարհաքաղաքային կեանք վարելով։ աղնուապետականութեան դէմ չը գրեցին՝ գործնականին մէջ մեծատանց աւելեւ ոչ խոնարհելով, այլ նուստտանալով։ ամէն տեսակ զեղծում չը գործեցին՝ ուղղութիւն քարոզելով։ Ո՛չ, անոնք չեն վերստակար մարդիկը։

Վնասը անոնցմէ՛ պիտի գայ, վնասը անոնցմէ՛ կուգայ, որոնք կեանքին նոր ըմբռնումը, կեանքին գիտական ըմբռնումը կը խեղաթիւրեն գործնականին մէջ։ Այո՛, մարդս նախնական վիճակի մը մէջ չը կրնար մնալ յաւիտեան, միշտ բեռ չը պիտի կրէ, միշտ քար չը պիտի կտորէ, միշտ ճալվաւ չի պիտի հագնի, միշտ բնութիւնն իր արտաքին երեւոյթով չը պիտի ձանձնայ մարդս։ յառաջագիմութեան օրէնքը չը վրիպի կամ յառաջագիմութեան օրէնքէն բան մը չը վրիպի։ Բայց յառաջագիմութիւնն ալ ուղիղ գիծի վրայ կրնայ ըլլալ, ինչպէս որ պարզ գիւղացի մարդուն ընթացքը շիտակ է կե-

(1) Հակառակ քարոզութիւնն ընել իրենց վերապահելով և թղթախաղի տեղ սիրոյ խաղամուրթիւն յանձնարարելով Հայ իգական սեռին։

նայ ճանապարհին վրայ։ Գիտութիւնն ու մտքին մշակութիւնը պէտք է ծառայեն մարդուն՝ իր գործերուն աւելի պայծառ գիտակցութիւնն ունենալու, բնութեան երեւոյթները բացատրելու ու բնութեան գործիւններն իր գիւրակեցութեան ծառայեցնելու, բնական և ընկերական ազէտներն աւելի յաջողութեամբ դարմանելու, մէկ խօսքով շարիքը սակսեցնելու ու բարիքն աւելցնելու։ Գիտութիւնն ու մտքին մշակութիւնն այս նպատակին ծառայելու են։ Ու լրագրութիւնն է՛ն մեծ գործիքը պիտի ըլլայ գործերու այս մեծագոյնին։ Լրագիր հրատարակող մը՝ մեր այս դրական գործուն մէջ՝ ամեն բանէ առաջ գիտուն պէտք է ըլլայ։ և եթէ գաղափարաց առատութիւնն ու գրելու գիւրութիւնն ունի աւելի՛ քան թէ գիտական ընդարձակ ու հաստատուն ծանօթութիւններ, գիտական դատարարականութեան այդ պակասը պարկեշտութեամբ՝ անշահախնդրութեամբ՝ աղնուութեամբ պարտի լեցնել։ — Պիտի տեսնե՞նք արդեօք այն բաղձացեալ օրն, ուր լրագրագետք աւհասարակ օժտուած ըլլան այդ բարոյական ու մտաւորական բարեմասնութեամբ։ Իսկ եթէ մեր աւանդուող դասերն բարոյական ու մտաւորական այն ուղորմելի վիճակը պիտի ունենան յաւիտեան, ուր այսօր կը գտնուին, լաւագոյն չէ՞ր — կը հարցնե՞ք մեղաւորութեամբ — լաւագոյն չէ՞ր որ մարդիկ միշտ գիւղացի մնային. քան թէ այդպիսի աւանդուողներու ձեռքով երթալ մինչեւ ի... խորխորատ։

Ե. ՏԼՄԻՎԻՃԻՊԱՇԵԱՆ

ՀԱՅԱԹԵՐ

Տգարանապետ Նշան էֆ. Պէրպէրեան 1894 տարւոյ համար Ժողովրդական Տոմար անուն գրքի մը հրատարակութեան ձեռնարկած է։ Օրացոյց, տնտեսական, արհեստական, երկրագործական ու առողջապահական գիտելիքներ, գանազան նւթոց վրայ մեր նըշանաւորագոյն անձանց կողմէ գրուած չափեկան յօդուածներ, բանաստեղծութիւններ, առածներ, հանելուկներ, աշխարհագրական կարեւոր ծանօթութիւններ, հետաքրքրական վէպեր, ծիծաղաշարժ սրբամիտ խօսքեր ու բաղմաթիւ ծանուցումներ կը վստան այս 400 էրեսէ բաղկանալիք մատենին մէջ որու գինը պիտի ըլլայ միայն վեց դրուշ։ Եւ Նշան էֆէնի կը խնդրէ ինձմէ Ծաղիկի միջոցաւ յայտարարել թէ իւր այս գրքին մէջ տպուելու համար ծանուցումներ ալ կ'ընդունի։ Ուրեմն, կը պատասխանեմ իրեն, նախ դուք ձեր հրատարակելիք գրքին ծանուցումն ըրէք, անոր օգտակարութիւնն հըռչակեցէք, անոր մեծ սպասումն հաւասար ըրէք և ծանուցումները կուգան։ Ու և է գործաւնութիւն մը ժողովրդեան խնայեցնելու համար կը բաւէ՞ սակայն լրագրի մէջ քանի մը տող ծանուցումը, մեզ համար դուցէ այո՛, բայց արեւմտեան Եւրոպացիք ու մանաւանդ Ամերիկացիք վաղուց անոր անբաւականութեան վճիռը տուած են. օր ըստ օրէ նորանոր միջոցներ կը հնարեն իրենց վաճառքին յաճախորդներ գտնելու

համար. ծանուցման համար ոչ ծախք կը խնայեն և ոչ հանձարեղ միջոցներու սահման կը դնեն. Բարիկի Բիլի ժուռնալ թերթը, որ 1,200 000 օրինակ կ'ստանայ, տարեկան 26,000 օսկի կը ծախսէ՝ այդ տասն փառնոց թերթին ընթերցողներ գտնելու համար. Ամերիկացի վաճառական մ'իմանալով թէ ի մահ գատապարտեալ անձ մը կայ, դիմեց անոր և խոստացաւ 1000 օսկի առ ժառանգորդացն՝ եթէ կախուցու միջոցին ծանուցանէ իւր վաճառքին ընտիր յատկութիւնները. դահլիճը կը պատրաստուէր չուանը ձիան անցունել՝ երբ գատապարտեալը խօսիլ խնդրեց. հանգիստաւոր և սարսըռալի լուր թեան մը մէջ, այդ օրհասականը վաճառականին ապրանաց ծանուցումն ըրաւ. երկու ժամ յետոյ բովանդակ Միացեալ Նահանգաց լրագիրք կախման մանրամասնութիւնը կը պատմէին՝ ծանուցումն ալ մէկտեղ. և վաճառականը մի շարթուան մէջ՝ վճարած 1000 օսկեոյն բազմապատիկը շահեցաւ:

Խորհուրդ չ'եմ տար մեր ժողովրդեան՝ այդպիսի ծայրայեղ հնարամտութեանց դիմել. բայց զարգացման, յառաջդիմութեան էական պայմաններէն մին կը համարիմ՝ ճանչցուած լինելը. և ծանուցումը կը ճանչցունէ. ուրեմն թող Նշան էֆէնտին իւր գիրքը ճանչցունէ, ձեռնարկուններն ալ այդ գրքին միջոցաւ իրենց արհեստը, վաճառքը ճանչցունեն:

Շատ կը ցաւիմ մտքիս անկարողութեան վրայ. ինչպէս ծանուցումի, նոյնպէս ուրիշ գործերու մէջ, հանձարի փայլը չեմ նշմարեր վրաս, նոր եղանակ չեմ կարող հնարել. միշտ այլոց գիւտերուն մէջ ընտրութիւն կ'ընեմ. միթէ արու թիւն մ'ալ չեմ գտար՝ գրեթէ բոլոր ազգայիններս համալինակ տեսնելով. մեր մտքին սահմանափակ մնալը դուցէ հետեւանք է մեր ընդհանուր կրթութեան. վարժարանին մէջ դաստուռն կը բացատրէ դասը կամ կ'ըսէ. « սըկէ հոս գոյ ըրէք »: մեր կարգացած գրքերն առ հասարակ ընդարձակօրէն կը ճառեն այս կամ այն նիւթը. կեանքի մէջ մեր բարեկամները միշտ խրատ կուտան զայս ընելու կամ այն ինչին զգուշանալու. վերջապէս ամէն կողմանէ մտքին ձգտումը կաշկանդուած կը մնայ. այո՛, միտքը միշտ ուրիշին կ'ընդունի իւր սնունդը. կ'զգանք, կը խորհինք, կը կամենք՝ միշտ այլոց նման. մեր ապրելու, գրամ շահելու եղանակն այլոց վրայ կը ձեւենք. անհատական ինքնուրոյն կեանքը, հանձարի կեանքը կը պակսի առ մեզ. ինչո՞ւ յանկարծ չը գտնեմ ծանուցում ընելու տարօրինակ ձեւ մը. ինչո՞ւ գիւտ մը չը յղանամ. է՛հ անկարող եմ, շատերս անկարող ենք. « ուսումը հանձարեղ կ'ընէ » կ'ըսէին. դժբաղդաւար սխալ է եղեր. լեզուներ, գիտութիւններ ամբարեկէ, յեղ-յեղուկ կեանքի մը փորձառութիւնն ստանալէ յետոյ, երբ սովորածներէս ու տեսածներէս դուրս արշաւանք մը չ'ընէր միտքս, անմիջեմար ցաւոց կ'ենթարկուիմ, և յանցաւոր կը դառնամ զիս դատարարներն որ առաջէս քայլեցին ձեռքէս բռնած, փոխանակ ճամբան միայն ցուցնելու որպէս զի ես ինքս քայլելով յառաջանամ. Հայ մը միայն գտած եմ, որ թերեւս վարժարան չէր յաճախած, որուն միտքն իր բնական թռիչք

զահած էր և որ մեր գլխարկները տաք կողապարներով ձեւաւորելու գիւտն ըրաւ. տ՛ա հանձարեղ մարդը. — զինքը կը ճանչէ՞ք. տոտր ներքին վիճակը ուսումնասիրութեան արժանի է:

Այս միտքը կաշկանդող դատարարակութիւնը կը տեսէ դեռ եւս մեր մէջ, այլ յուսեցոյն ապականութեամբ. մեր սերունդը գոնէ շատ կ'ուսնէր և նուազ կ'ամբար, հաւաճէր. զարդիս գրագիտաց դասակարգ մ'երեւան ելած է, միտքն այնքան անկար, որքան կ'ենթադրուի հիներունը, բայց գիտութեան և ուսման համբարանոցն անհամեմատ աղքատ. այդ դասակարգ, սակայն, անօրինակ հանձարի ծնունդը կը նկատուի ըլլալ. իր երկունքի ցաւոց ճիշերով ականջներ կը խլացնէ. այդ հանձարի ծնունդով պիտի ապացուցանէ թէ գրագէտը մտքի ո և է կապանքէ զերծ մնալու է. լեզուի, արամարանութեան, ներդաշնակութեան, կաշկանդիչ օրէնքներուն չհպատակելու համար՝ կ'ուրանայ զանոնք հիմնովին ուսնելու պէտքը և կը ծաղրէ գրաբար գիտցողներն որք կը հասկնան թէ ի՞նչ ըսել է « Տիրոս քաղաք » վաճառատան ամենայն աղագաց, և որ աւելի կը ծաղրէ զանոնք որ չեն հասկնար հետեւեալները.

« Զեփիւռը կը սըլուըլայ. — Զուրը կը « մոնչէ. — գանկաջախձախ երկրպագութիւն. — բոժոժերգի պէս ծնծղայել. — « գետափին եղբէն խլուած եղգ ներդաշնակ. — վերին հանդարտութիւն (այն միջոցին՝ երբ եկեղեցւոյ մէջ դպրեք կ'երգեն, ծնծղայներ կը չալուին, և այլն):

Մեր մէջ նոր երեւնալու վրայ եղող հանձարն այս տեսակէն է. գո՛հ ըլլա՞նք, թէ մալթենք որ մարի անոր նշուը:

Ա. Ա. ՍՈՒՐԷՆԵԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

Կոնդակիս պատժական տրամագրութիւնները գնելէ առաջ, կարեւոր համարեցանք նշանակել հոն որոշուած ծախուց ցուցակը.

Ընտանիքները բաժնուած են չորս տաղի-ճանի. Էլայ, Էլսաւս, առաջին էսնայ, երկրորդ էսնայ, ըստ իրենց նիւթական կարողութեան:

Այսպէս, փեսացունին կողմէն տրուելիք նշանը պիտի ըլլայ Ա. 60 բուպիէ օսկի, արծաթ տուփի մէջ. Բ. 40 բուպիէ, փոքր արծաթ տուփի մէջ. — Գ. 20 բուպիէ և Դ. 10 բուպիէ:

Բաղանեաց գրամը. Ա. 50. — Բ. 30 — Գ. 20 և Դ. 10 զրշ:

Ըրգակը. Ա. 2500 զրշ. — Բ. 1250 զրշ. — Գ. 500 զրշ. և Դ. 250 զրշ. և Կերակուր. Ա. 12. — Բ. 8. — Գ. 6 և Դ. 4 տեսակ:

Քօղը. Ա. 200. — Բ. 120. — Գ. 60 և Դ. 30 զրշ.:

Երեսուեսէք. Ա. 300 զրշ. ի մատանի կամ ծաղիկ. — Բ. 150 զրշ. — Գ. 10 բուպիէ և Դ. մէկ օսկի:

Հարսին ընտանեաց կողմէն. — հանդերձ և պուրդ (ձէկէզ). Ա. 3000. — Բ. 2000. — Գ. 500. և Դ. 250 զրշ.:

Ձեռք պագի օրը. Ա. 300 զրշ. ի ժամացոյց կամ մատանի. — Բ. 150 զրշ. ի ժամա-

ցոյց կամ մատանի կամ կաղամար (տիֆիթ). — Գ. 50 զրշ. ի ընծայ. և Դ. մէկ չէփրէ:

Ահաւասիկ այս կարգադրութեանց զանցաւու եղողներուն պատիճները.

Հարկիւ պատուիրեմք և հրամայեմք համայն Քահանայիցդ, զի այսուհետեւ դուք Քահանայքդ՝ ամենայն հարսանեաց տէր անձանց պատիճանն՝ զկարգն և զկարողութիւնն ըստ ժամանակին ստուգեալ իմացէք յիւրեանց արհեստակից կանափի գլխաւոր և հաւատարիմ անձանց, և ապա գնացեալ ի տունն՝ աչօք ձերով տեսէք մի ըստ միտքէ, թէ ամենայն պատրաստութիւնք նորին ինչէն ըստ իւրեանց աստիճանի և կարգի՝ համաձայն վերոգրեալ կանոնաց. և թէ խոտանայ զվերոգրեալ յանձնառական բարեկարգութիւնն անպակաս պահել, և զհրաժարական անկարգութիւնն շառնել, այնուհետեւ եկեալ ի Պատրիարքարանս մեր՝ ճշմարիտ վկայութեամբ ծանուցէք զպահպանութիւն պատուիրանացս և զկատարումն կանոնացս. և այնպէս առեալ զհրաման հարսանեաց նորին, գնացեալ օրինօք պատկեցէք:

Եւ եթէ ոք զխոնարհութիւն սիրեացէ, և զպատրաստութիւն հարսանեաց իւրոց՝ քան զիւր կարողութիւնն ստորին կարգաւ արացէ, այսինքն էլայն՝ էփսափ կարգաւ արացէ, կամ թէ էփսափ է անայի կարգաւ արացէ, այնպիսի խոհեմ մարդն՝ առաւել գովելի և պատուելի է յամենիցս: Եւ մի ոք բռնադատեացէ զկարողութիւն ունողսն՝ թէ հարկիւ պարտ է ըստ քոյք աստիճանի և կարողութեան՝ կարգի կանոնին համաձայն առնել, և մի ստորին կարգաւ: Քահալի այս կանոնք սահմանեցան վաւրն կարողութիւն ունողաց, զի մի յիւրեանց աստուածատուր կարողութիւնն վստահացեալ՝ աւելի քան զկարգադրեալ կանոնքս բան ինչ արացեն. բայց խոնարհաբար առնեն՝ ազատաբար ամենեցուն խոհեմութեան յանձնեալ է. իսկ կարողութիւն չունող աղքատք՝ ո՛րքան կարեն, այնքան հոգացեն: Եւ մի ոք ստիպեացէ զաղքատսն, թէ ամենայն հարսանիք հարկիւ պարտին լինել կամ առնել ըստ միոյ կարգի վերոգրեալ կանոնաց: Քահալի հարսանեաց և պսակի օրինաւոր հաստատութիւնն՝ է ուղիւ հաճութիւն և հաւանութիւնն երկուց կողմանց ընդ միմեանս. միայն թէ փեսային պիտոյ է ունել զհարսն պահելը կարողութիւն և հարսին առ այն յօժար հնազանդութիւն. այսքան թէ յայտնի լիցին, և ամուսնանալ կամեսցին, թէ տան և թէ չտան ինչ՝ օրինօք պատկեցին:

Բայց ո՛վ ոք զանցանիցէ զչափ կանոնացս, և քան զինքն բարձրագոյն աստիճանի պատրաստութիւնս տեսցէ, որով խախտել խափանել և աւերել կամեսցի զայս ամենայն հասարակաց օգտաւէտ բարեկարգութիւնքս, և կամ թէ խարդախութեամբ զՔահանայն իւր խաբեցէ, այնպիսին համայն ազգիս բարեկարգութեան քակտիչ, վնասիչ և չարեաց պատճառ է. ազգովին վրէժխնդի՛ր եմք նմա. այնպիսեոյն հարսանեաց հրաման մի՛ եղիցի. Քահանայ ոք ի տուն նորին մի՛ գնացէ, և մի՛ բնաւ պըսակեացէ. այնպիսի անհնազանդ անձին պատրաստ եմք Թագաւորական Պէրաթին:

մերոյ բարձու իշխանութեամբ զմարմնաւոր պատիժ պատուհանն հատուցանել, և հոգեւորական իշխանութեամբ նզովս իրաւացիս և անէծս արժանահատոյցս տալ, և ծանր բանադրանք դատապարտել. զորպիսիս հեռի՝ արասցէ Աստուած ի ձեռք:

Եւ թէ ծխաւէր Քաջանայն իմասցի և տեսցէ զպատարասութիւնն ընդգէժ կանոնացս եղեալ, և երեսպաշտութիւնն ցուցեալ աշառանք վարեսցի, և խորամանկութեամբ ո՛չ ծանուցէ ճշմարտագէտ, այլ սուտ վրկայութեամբ հրաման առեալ՝ պսակեսցէ զչափ անձին չճանաչողն, և զաստիճան իւր չպահողն՝ և զսահմանքս զանցանողն, այնպիսի ճշմարիտ չխօսող քաջանայն աքսորեսցի ի քաղաքս և յեկեղեցւոյն, զրկեսցի յամենայն Քաջանայական հասից և յիրաւանց. և բոլոր ժողովուրդն նորին՝ ի կողմանէ Աթուոյն տիրեսցի. և անշաղճօրէ միասցէ յամենայն արդեանց իւրոց: Ուրեմն սիրելի՛ և օրհնեալ որդեա՛կք իմ ի Քրիստոս Յիսուս, որովհետեւ համակամ միմեանց երաշխաւորութեամբ դաշնադրեալ խոստացոյք և յանձն առիք զայս ամենայն սիրով և յօժարութեամբ առնել, զյանձնառականսն կատարել, և ի հրաժարեցեացն հեռանալ, և մինչեւ ցլետին նշանախեցն պայմանադրութեան ձեր չանցանել, և քակեցոյ պատճառ երեւողին միաբան վրէժնիւն լինել. զոր և այսմ ուխտադրութեան համադրային բազմակնիք մահտարն ձեր պահեալ ունիմք առ մեզ. մեք եւս հայրական խնամօք վերակացու եմք այսմ ամենայնի: Նախապէս հարկիւ պատուիրեմք պատուելի Քաջանայիցէ՝ շաշուրջ զգուշութեամբ, անձանձիր վերակացութեամբ քննութիւն աւարի՛ք, և մանրախոյզ ստուգեցէ՛ք մի ըստ միով՝ ի ներկայութեան մտերիմ մարդկանց, այնպէս՝ զի մի՛ և դուք յանցաւոր երեւեսցիք. և որ ոք ո՛չ լուրիցէ՝ և ո՛չ հնազանդել կամեսցի, զայնպիսիսն մեզ ծանուցէ՛ք, զի դուք անսպառ գտանիջիք:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐԺ
Կոստանդնուպոլսեցի

Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Հիմա որ պոլսական թէ՛ գաւառական գաւառուաց և վարժուհեաց մեծ մասն, այս կամ՝ այն եղանակաւ, և իւր ձեւակերպութիւն վկայագիր մը ստացած է, կ'արժէ և ժամանակն է որ խնդիրն ի նորոյ և հիմնապէս ուղադրութեան առնուի և քննուի թէ արդեօք այդ վկայեալներուն մէջ չկա՞ն այնպիսիք որոնք էապէս չունին իրենց պաշտօնին կոչումը, և, քիչ մը անաշտութեամբ, գուցէ անարժան դատուած ըլլալին վկայագրի:

Պարզապէս վկայականաց զտու մ'է՛ զոր անհրաժեշտ կը դաւանինք, մեր մատաղ սերնդեան օգտին համար և ուսուցչական մարմնոյն արժանապատուութեան համար:

Երբ ի նկատ առնենք թէ ինչպէս տրուեցան վկայականներն, զժուար չպիտի ըլլայ ըմբռնել կարեւորութիւնը մեր յարուցած խնդրոյն: Նոյն իսկ Ուսուցիչներու՝ անոնց որ վստահ են իրենց հմտութեան և կարողութեան վրայ՝ պատիւը կը պահանջէ՝ որ փափաքով ըլլան այս վերաքննութեան:

Ամէնքս ալ գիտենք թէ ինչ կերպով, հինգ վեց տարիէ ի վեր, բաշխուեցան այն սպեալ, պաշտօնական արտօնագիրները որք իւր մտից տոմս իրաւունք կուտան կարգ մը մարդոց՝ զպրոցէն ներս սարգելու: Անոնք որ Պոլիս էին՝ անձամբ, իսկ անոնք որ Պոլսէն հեռու էին՝ գրերով ներկայացան Ուսուցչական Խորհրդին, և առանց դժուարութեան, առանց երկար բարակ յագնութեանց, առանց քննութեան, արուեցաւ անոնց՝ խնդրուած թուղթը: Ետտ քիչեր կը յիշեմ որ հարեւանցի քննութիւն մ'անցուցին: Մեծ մասը յանձնարարականով, ըսե՛նք նաեւ շնորհակով, ստացան վկայագիր, ու մանք իրենց արժանիքն աւելի, ում'նք ալ պակաս, բայց չատերը՝ աւելի:

Մէկէ աւելի են անոնք որոց նկատմամբ բողոքներ, անարժանութիւններն ապացուցանող իրողութիւններ պէտք եղած տեղը ուղադրութեան ներկայացուած ըլլալով հանդերձ, յաջողեցան ո՛ր է կերպով: Անոնք նոր յայտնութիւններ չեն որ կ'ընենք և իրականութեան մէջ այս ամէնը լոկ պաշտօնական ձեւակերպութիւններ են, սահմանեալ օրինաց համակերպելու համար — աւելի ոչինչ: Այս պայմանաց մէջ ձեռք բերուած վկայագրի մը բացարձակ արժէք ընծայել՝ միամտութիւն պիտի ըլլար:

Կը մնայ արդե՛ կարեւորը՝ կենսականը. — հարկեւորաց և արժանաւորաց տալ աւանդութեան պատիւը, ի մի բան, ցորենը զատել որովն:

Եւ այդ դժուար չէ:

Արդի Ուսուցչական Խորհուրդը մեզմէ առնելու պէտք չունի իւր պաշտօնին օգտակար կիրառութեան մասին հրահանգներ, և գիտենք թէ իւր առաջադրած բարեկարգութեանց մին այս պիտի ըլլայ, և այն եղանակաւ որ կատարուելիք վերաքննութիւնն ըլլայ արդար, անաշտ և ոչ-ձեւական:

Կրթական նոր յայտագրին համեմատ, որ Մէլարիֆէն վաւերացուելով օրինաց ոյժ պիտի ստանայ և ամենուրեք պարտաւորիչ պիտի ըլլայ, Քննութեանց Ծրագիրներ և Հարցարաններ պատրաստել նախակրթարանաց մէջ աւանդուած բոլոր ճիւղերուն համար: Հսկող մարմիններու ձեռք հոս թէ գաւառները կատարել վերաքննութիւնը, և այս վերաքննութեան թուականն սկսեալ, անզօր և անարժէք նկատել նախորդ վկայականները:

Ապահով եղէք թէ գո՛նէ հարկերին յիստենն այն գաւառուաց որք այսօր վկայեալ են, չպիտի համարձակին, չպիտի փափաքին վերաքննութեան մասնակցիլ:

Մրցման մասնակցող ուսուցիչք գրաւոր կը պատասխանեն առաջարկեալ գրաւոր հարցմանց, ի ներկայութեան գաւառային Առաջնորդաց, կա՛մ Փոխանորդաց և կա՛մ Գաւառ. Ուսումն. Խորհրդին: Ամէն մէկ թաղ, ամէն մէկ քաղաք և գաւառ կը դըրկէ այդ պատասխանները, ստորագրեալ և վաւերացուած, առ կեդր. Ուսումն. խորհուրդն: Հոս է որ այդ պատասխանները պիտի քննուին, քննադատուին և ըստ այնմ պիտի տրուի վերջնական վճիռը, որով տեղի չմնար աւարկելու թէ կրնայ զեղծումներ պատահիլ գաւառաց մէջ և տեղական նկատմանց զոհուիլ արդարութիւնը: Այսպէսով կեդրոնն չօգտիւնի ապացոյց մը

կ'ունենայ գաւառուաց իրական կարողութեան վրայ և գիտակցաբար կուտայ անոնց արտօնագիր, ըստ աստիճանի:

Եւ ամէն երեք (կամ հինգ) տարին՝ մի անգամ տեղի կ'ունենայ վերաքննութիւնը: Այս շրջաններու մէջ անոնք որ իսկզբան տկար գտնուեցան, աշխատելով իրենց նախասիրած ճիւղերուն մէջ, աւելի եւս զարգանալու հետամուտ կ'ըլլան: Տեսակ մը պարբերական մրցում որ ուսուցիչ գաւառն մէջ միշտ վառ պիտի պահէ բարի նախանձ մը. ուսուցանելով հանգերձ, պիտի ջանան ուսանիլ, մինչեւ յաջորդ շրջանն աստիճան մ'եւս յառաջանալու, իրենց մտաւոր պաշարն աւելի ևս բազմացնելու: Յաւազադիմութիւնը մրցմամբ:

ՍՄԲՍՏ ԴԱԽԹԵԱՆ

Հ Ի Ն Ո Ւ Ն Ո Ր Ը Փ Ր Ի Կ Ի

Չգիտեմ թէ անպատեհ կ'ըլլա՞ր արդեօք Արիւիկէն եւս միւրակ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ անուամբ, քանի որ մինչեւ հնգետասներորդ դարն՝ Արեւելեան կիսագունտի այս կարեւոր ցամաքին միայն հիւսիսային փոքր մէկ մասն էր ճանչցուած և ճիշդ Ամերիկայի գտնուած դարուն սկսան Եւրոպացիք տակաւ խուզարկել նորա ծովեզերեայ միւս մասերն:

Եգիպտոս, Կիւրենէ, Եթովպիա, Կարթագեն, Լիւբիա, Նումիդիա և Մաւրիտանիա, միայն ասոնք էին ահա՛ Հիւսիսային Արիւիկէի մէջ՝ Յունաց և Հռոմայեցոց ծանօթ աշն երկիրներն որոց վրայ կը խօսի պատմութիւնն: Մինչդեռ մնացեալ ամենամեծագոյն մասը մարդկութեան համար առասպելական անհեթեթ աւանդութեամբք ու անձանթիւն թանձր վարագուրով էր ծածկուած:

Ինչպէս ըսի, Ժեորդ դարու վերջին քաւորդին է որ, ցայն վայր աննշան մնացած Փորթոկիզեան փոքր՝ այլ յանդուգն ժողովրդին նախաձեռնութեան շնորհիւ՝ կը պատուի Ամրիկէն քօղարկող անթափանցելի վարագոյրն և քաղաքակիրթ աշխարհի առաջ կը պարզուի գործունէութեան ու անտեսական յառաջդիմութեան անսահման մի ասպարէզ:

Եւ արդարեւ, մարդկային ազգի պատմութեան մէջ ինչ անմահ էջեր գրուած են Պառթէլէմի-Տիաղ և մանաւանդ Վասքօ-տէ Կամա Փորթոկիզ այն անուանի նաւարկուք որք, յաղթահարելով ամէնէն թանձրացեալ նախապաշարումներն և բնական ամենէն զարհուրելի վտանգներն, առաջինը՝ Պառթէլէմի՝ կը յաջողի ամբողջ արեւմտեան Արիւիկէի ծովափուքը քերելով՝ հասնիլ նորա հարաւային ծայրը (1486), զոր կ'անուանէ Գլուս սանջանաց և զոր ապա՝ Փորթոկալի թագաւորը Օհան Բ. փոխելով կը կոչէ Գլուս Բարեյուսոյ (քափօ աի պօնա էսդէ-ռէնձա):

Այս թուականն տասն և մէկ տարի յետոյ՝ 1497 յուլիս 8ին, Վասքօ-տէ-Կամա երեք նաւերով ճամբայ կ'ընէ Լիզպօնէն, և անհնարին դժուարութեանց յաղթելով՝ կ'անցնի Բարեյուսոյ հրուանդանն և չարունակելով իւր ճամբան զէպ ի արեւելեան հիւսիս, կը հասնի ի Քալիքութ: Վասքօ-տէ-Կամա առաւել քան երկու տարիներ

մարդոց և տարբերաց գէժ՝ արիտար մաքա-
ռելէ յետոյ՝ յաղթանակաւ կը վերադառնայ
ի Լիզպօն՝ աւետելու համար Էմմանուէլ
թագաւորին՝ թէ գտնուած է մեծահարուստ
Հնդկաստանի ծովային ճանապարհն և թէ՝
չատ նպատակաւ որ պայմաններով առեւտրա-
կան դաշնագրեր ու արտօնութիւններ ձեռք
ձգած է տեղւոյն վեհապետաց կողմանէ։

Մարդկային քաղաքակրթութեան և տըն-
տեսական զարգացման կրկին տեսակէտնե-
րով իրապէս Մեծ գէպերը ու երեխելի
թուականներ, որք են ու պիտի մնան յա-
ւէտ՝ Պատմութեան մեծագոյն փառքերը։

Գիտական այս խաղաղիկ ու փրկաւէտ
աշխարհակալութեան առաջին յաջող արար-
ուածը մեծ քաջութիւն մը կ'ըլլայ աւելի խի-
զախ և անվեհեր ոգիներու՝ որք յաջորդա-
բար կը շարունակեն Կամայի օրինակին հե-
տեւիլ։ Առաջադիմական ճիւղներու և ուր-
հաղիտութեան և ամբողջ հարստութեանց
տիրանալու անգոյսով տեսնել։ Եւ այս ալ
չատ բնական էր, քանի որ այլ եւս լուծ-
ուած էր Արիւնիկեան հանգոյցը։

Սակայն Արիւնիկէի բուն ներքին մասանց
խուզարկութիւնը տակաւին չէր սկսուած։
Յամաքն էր դժուարինը, հոն կը գտնուէին
մէկէ աւելի վտանգներ։ Կլիմայ, վայրենի և
գազան՝ դաշնակից պատուհաններ որք ան-
հրաժեշտ ըրած էին Արիւնիկեան ցամաքը։
Բայց հոն էր նաեւ մեծ փառքը, հոն էր
յաղթանակի անմահ դափնին։

Եւ այդ դափնին ստանալու համար, ժը-
րդ դարէն սկսեալ կ'սպառազնուէին Մօնթե-
նապոլէոն, Քլարքէրքըն, Ռիչարտսըն, Պէրթ,
Սիմք, Կրանդ, Օվերթէյ, Պէյքըր, Լիվին-
կըսթըն, Պիւրթըն, Կորտօն, Սթէյնլի, Է-
մին, Քրամփիլէ, ևն։ Եւն. մուցայ ըսելու՝
մինչև իսկ արիւնիկէի և օրիորդներ, անձ-
նուրաց և անվեհեր հոգիներ, ամենքն ալ
մեզ նման՝ տուն, ընտանիք, հանգիստ և
վայելք ունեցող, ծնողաց գուրգուրանքի,
դաւակաց և ամուսնիներու սիրովն կապ-
ուած առաքելի և վեհանքն արարածներ,
որք կ'արհամարհեն այդ ամէն բարեքներն,
կը խիզախեն անձանթին մէջ, կը միոյնին
անսահման ու մարդասպան անապատներու
խորերը, շատերը կը գոհունանաւ ի սէր ի-
րենց նմանեաց և քաղաքակրթութեան, ըլ-
լալով միութեան գլխ մը Աստուծոյ արա-
րածոյ մէջ և ի մի բան գլխովին կը յեղա-
շրջեն Արիւնիկեան քարտէսն, որ՝ միօրինակ,
մերկ և անհրապոյր պատկեր մ'էր տակաւին
կէս դար առաջ, մինչդեռ այսօր՝ շնորհիւ
այդ արիւ հոգիներու՝ կը ներկայացնէ ծա-
նօթ աշխարհներու, հարուստ երկրաց,
քաղաքակրթութեան դրոշմն ներքեւ մըտ-
նելու արամադիւր՝ հարիւր միլիոնաւոր ժո-
ղովրդոց գունագեղ մի պատկերն։

Ահա՛ քաղաքակրթութեան այդ առաք-
եալներուն, խաղաղութեան Արիւնիկէի այդ
մեծ զիւլցաղանց գործերն ու կատարած
փրկաւէտ աշխարհակալութիւններն են զորս
մտադրած եմ յաջորդաբար նկարագրել
«Ծաղիկի» ընթերցողաց։

ԿՐԻԳՈՐ ՄԱՐԴԱՐԵԱՆՆԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱՄՍԿԱՆԻ

Դ.

Աղջկանց դաստիարակութիւնը (Ֆիգիգական)

Ազնիւ Արմենակ,

Իրրեւ կատարելութեան ձիրք, կ'ըսէի
անցեալ անգամ, աղջիկներն ունին սուր
քափանցող միտք, նրբազգաց սիրտ։

Իսկ իրրեւ թերութիւն ունին նախ՝ փա-
փուկ մարմին. երկրորդ, յեղեղուկ կամք-
երրորդ, անհամախառն միտք։

Որպէս զի հաւասարակշռութիւնը պահ-
ուի, պէտք է որ անոնց բնութեան մէջ,
բարի օգտակար տարրերը՝ որք արթուն են՝
ստանան բարեւոք ընթացք, զարգանան տը-
կարք, և զարթունան անոնք որք կը ննջեն
ի քուն։

Եւ նախ, տեսնենք թէ ինչպէ՞ս կրնանք
ըստ կարելոյն աւելի տոկուն ու աւելի ը-
նեղ զանոնք մարմնապէս։

Սնունդ. — Աղջիկներն ընդհանրապէս
կարեւորութիւն չեն տար անդառնութեան,
կը սնանին անբաւական կերպով, նոյն իսկ
անոնք որք կը վերաբերին գիւրակեցիկ ըն-
տանեաց։ Բայց բնախօսական գիտութիւնը
մեզ կ'ուսուցանէ թէ՛ աղջկունք, ըստ ու-
րու՝ մէկ կողմանէ իրենց սպառած ոյժը
պիտի նորոգեն և միւս կողմանէ՝ պիտի ա-
ծին, շատ աւելի սնունդի պէտք ունին քան
չափահաս կանայք. ուստի բնապէս իրենց ա-
խորժած վստիկ կերակրոց կցելու են հիւ-
թեղ կերակուրներ եւս։

Հանգիստ. — Հանգիստ մը՝ որ չտաքցը-
ներ, որ ազատ շարժումները կը խափանէ,
որ, թոքերը ճնշելով, շնչառութիւնը կը
դժուարացնէ, գիտե՞ս, որչա՞փ կը կասեցնէ
մարմնական աճումն ու զարգացումը մանա-
ւանդ փոքր տղոց որք նուազ կարող են գի-
մադրել ցրտի ու աւելի՛ պէտք ունին վա-
զելու ցափկելու, և հետեւաբար՝ աւելի
լիաթք շնչելու։

Երբ շատ թեթեւ են հանգիստները,
սննդեան մէկ մասը կը վատնուի պէտք ե-
ղած տաքութիւնն արտադրելու. տաքու-
թիւն՝ զոր թեթեւ հանգիստը կը զլանան
տալ նմա։ Նեղ հանգիստի մէջ, կենաց հը-
նոցն աւելի չգոյն թթուածնի՝ կը վառի դան-
դաղ, չիջեւածութիւն. արիւնը չ'ընկնի իր շըր-
ջանն օրինական արագութեամբ. և ահա՛
մանկան առողջութիւնն է որ կը տուժէ, և
կամ, անոր կեանքն է որ կը զոհուի՝ մայ-
րական սրտի տաքութեան կամ ի փառս նորասի-
րութեան։

Եւ սակայն, ի սէր իրենց զաւակաց՝
մայրերն պարտ էին քիչ մը չափաւորել նո-
րածեւութեան իղձն, ի միտ առնուել կեն-
սաբանական անաշու օրէնքն, և աւելի՛ ի-
մաստութեամբ ընտրել հանգիստներու
նիւթն ու ձեւը։ Հանգիստից լայնութիւնն
ու վատ հաղորդականութիւնը՝ կարելի չէ՞
արդեօք՝ հաշտեցնել անոնց վայելչականու-
թեան հետ։ Այս մասին՝ ինչո՞ւ համար վար-
ժարանք ի գործ չ'ընէ իր հեղինակութիւնը
ծնողաց վրայ։

Մարմնամարզ. — Կանոնաւոր մարմնա-
մարզ ընելու ամօթ կ'զգան աղջկունք մեր
վարժարանաց մէջ. գոնէ վաղվցէին, բաց
օդին գնտակ խաղային, ազատ շարժումներ

ընէին. — ո՛չ. համեստութեան հակառակ
են այս բաները՝ շատ փոքրերու վայելուչ։
Պատկերելով ձեռք թեւ ի թեւ, բոլորուել
ու կարգաւ ծառի մը շուքին տակ. այս է
անոնց գրօսանք։ Ծնողք և դաստիարակք
միանգամայն պատասխանատու են՝ անոնց
այս արամադրութեան։ Ծնողք անո՛ր հա-
մար որ նախապաշարած են իրենց աղջիկնե-
րը. դաստիարակները՝ անո՛ր համար որ կը
յարգեն անոնց նախապաշարումը։

Գաւառացի մէջ, որքան տարբեր է գիւ-
ղացի աղջկանց կեանքը։ Գարունը գալուն
պէս՝ թռչնոց երամներու նման դուրս կը
թափին տներէն. արտերու, պարտէզներու
մէջ կ'ախտախն ժիրաժիր. դաւարեաց վը-
րայ կը վազեն կը խաղան արծաի համարձակ.
Համակ կեանք են ու կենդանութիւն. կեանք՝
որ իրենց աչքերէն, իրենց այտե-
րէն, իրենց գլխու վարսերէն դուրս կը հե-
ղու՝ խնդութեան, ծիծաղի, բարբառի ու
շարժումի վերածուած. կենդանութիւն՝ որ
աւետական բան մ'ունի իր մէջ, որ արտա-
սովոր փայլով կը հիացնէ, բնականու-
թեամբ կը հրապուրէ, ջերմութեամբ կը
հրահրէ և ամօթխածութեամբ կը գիւթէ։

Մեր քաղաքացի թօշնած աղջիկներն ալ
կրնան կեանք ու կենդանութիւն ստանալ
ազատ խաղերով, կանոնաւոր մարմնամար-
զով, տնական պարտիզպանական աշխատու-
թեամբ, հետիտն պտոյտներով։

Լաւ սնունդ, յարմար հանգիստ, կանո-
նաւոր մարմնամարզ. ահա՛ յորդարուղի աղ-
բիւրներ կեանքի և կենդանութեան։

Աղջիկը կ'սպառէ մարմինը. — Մտաւոր
աշխատութիւնը՝ երբ սկսի կանխահաս, կա-
տարուի անբնական կերպով ու շարունակ-
ուի սաստկագոյն զօրութեամբ, յառաջ կը
բերէ բնախօսական անխուսելի հետեւանք.
Բնութիւնը՝ որ կը գործէ մեր մարմնոյն մէջ՝
անաշու հաշուագէտ մ'է. իր ելեւմուտքն
ունի զոր հաւասարակշռութեան մէջ պահել
կը ձգտի յարստամբ. եթէ տառ ու տառ իր
մէկ գործարանին այնչափ որչափ չ'սպառն-
ջեր, ու է միջոցաւ մը կ'սպառէ աւելորդն,
որպէս զի հաստատէ հաւասարակշռութիւն.
Իսկ եթէ առնես ու առնես իր մէկ գործա-
րանէն աւելի քան զոր կրնայ վատնել,
գա՛րձեալ միւսնոյն նպատակաւ, կ'առնու կը
յափշտակէ բաժինէն ուրիշ գործարանի մը
որ կը տուժէ ի հարկէ։ Արդ, գիտենք թէ
մտաւոր աշխատութեանց մէջ ուղեղը կը
կարօտի արեան որ՝ որչափ աւելի առատ
ու յաճախ շրջի գանկին մէջ, այնքան աւե-
լի շատ նիւթ կը բաւանայ մարմնոյ զանազան
կէտերէն. այսպէս, ուղեղն ուտելով սպա-
ռելով մարմնոյն բաժինէն՝ մարմինը չափա-
ւորապէս կը կրէ ուղեղին հակադրեցութիւ-
նը, երբ սա չափաւորապէս միայն շեղած է
անդր քան իր բնական գործունէութիւնը.
Իսկ երբ մտաւոր աշխատութիւնը յանշափա
առաջ մղուի, ո՛չ թէ միայն մարմնոյն միւս
գործարանք, այլ եւ ուղեղն իսկ կը տուժէ
ծանրապէս. բնախօսական օրէնք մ'է որ կը
գործէ հոս դարձեալ. ներհուն բնախօսք
դիտած են որ ամսան ու զարգացման երե-
ւութից մէջ կայ ընդդիմադրականութիւն.
Ըստ այսմ, ուղեղը շուտ շուտ անելով վա-
ղահաս՝ յետոյ անընդունակ կ'ըլլայ զար-
գացման։

Արդ, այս ամէնը, զեղծմունք կամ ան-
հոգութիւն ի մասին կերակրոյ, զեղծմունք

ՎՐԻՊԱԿ. — Ծաղիկի վերջին թուոյն
113րդ երեսին առաջին սխալներն առաջին
տողին մէջ, «բերնին մէջ ջուր փչելու է»
խօսքը պէտք է կարդալ «... շուկն փչելու
է»։

ի մասին հանգերձից, անտարբերութիւն մարմնական աշխատութեան համար, սերտ յարուսն մտաւոր աշխատութեան՝ այս ամէնը կը դառնան և չարաչափ կը դառնան մեր ապագայ մարց Փիզիքական կազմութեանը:

Մարմինը՝ իր ամէն պէտքերով՝ մարդկային ամէն գործողութեանց աղբիւրն է. ուստի, անոր աճման ու զարգացմանը համար ինչ որ ընենք, ի վեր զատնած չենք ըլլար. մարմնական կորովը կը փոխանցի մաքին, կը փոխանցի սրտին, կը փոխանցի նոյնպէս կամքին. և այսպէս՝ մեր գործողութեանց մէջ՝ ներգաշխակութիւնը կ'սկսի աղբիւրէն:

Մեծ քոյր
Սեղմիչ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

Նկարիչ. — Կ'աքանչանամ՝ երբ կը դիտեմ աշաց սովէն պարզութեամբ գեղեցիկ տեսարանն: Սա մարդագետինը բիւրաւոր գունագեղ ազամաններով փառլուսն. սա գալարագեղ բլրոց գիւղագէտ շղթայն որ խոր ու խաղաղաւէտ ձորերէն վեր կը սլանայ կ'երթայ. բլուրներ որոց գագաթները նորածագ արեւուն սակի լուսովը կ'սղաղուն. նոցա կուշոր գտնուած անտառն իւր խորհրդաւոր ստուերներով. սա հեզասահ տառապան որ մամուսագետ ու ողորկ ժայռերուն վրայէն սահելով կ'երկայնի բիւրեղեայ ժապուէնի մը պէս և կ'երթայ՝ կայծի նման կաթիլներ ցայտեցնելով՝ թափել միապաղաղ լճին մէջ որ իւր երկնափայլ հայելոյն մէջ կ'անդրադարձնէ առարկայից պատկերն, ըզմայելի գեղեցկութեամբ: Երանի՜ վրձնոյն որ գիտէ այս ամենը բնական գոյներով ներկարել:

Երաժիշտ. — Այդ հիանալի տեսարանները ոգեւորող ձայնն ալ մի՛ մոռնաք. առուակին խոսողները, թռչնոց դայլայիկը, ոչխարին մայելը, կովին բառաչելը, միջտաներու բզկիւնը, ծառոց մէջէն սուրացող գիւղերային հոգմոց ողբագին ձայնը, առիւծին մանչիւնը, փոթորիկն ահեղ գոռումն ի վեր կը հանեն բնութեան տղու. չքեղ կամ արհաւիրացի կեանքը. մարդկային ներգաշխակ ձայնն ու երգը մանուսանդ՝ կ'արթնցնեն մեր սրտից մէջ տխուր կամ վաւարի զգացումներ, գիտա կամ վայրագ կ'ընեն զմեզ, երկչոտ կամ յանդուգն, սիրող կամ ատեցող. ձայնը պակասեալ ի բնութեան, ձեր ցուցած նկարագրեղ տեսարանները կը դադարին սրտի հետ խօսելէ, կեանք ունենալէ:

Նկարիչ. — Միթէ՛ նկարը զո՞րկ է զգացում արտայայտելու և ներշնչելու կարողութեան. կարելի՞ է անզգած մեալ պատկերի մ'առջև ուր գտնի՞նք անողորմարար մանուկ մը կը խողխողէ, կամ նաւարեկեալն լեռնակուտակ ու մրկայոյզ ալեաց ներքեւ կ'սկսի սուզիլ, կամ հոգեվար զաւկին անարին քով մայրը նոտած կ'արտասուէ, և կամ հայրը խանդախտաւոր կը գրկէ պանդխտութենէ վերադարձող իր որդին. լու գծուած պատկեր մը կը վարթուցանէ ի մեզ սէր, ատելութիւն, երկիւղ, սարսափ, բարկութիւն, գութ, զղուանք կամ հիացում. մեծ նկարիչներն անմահացած են այդ զգացումներն ազգելու կարող լինելուն համար: Իրենց ճարտար նկարներուն մէջ

գրողութեամբ են կենդանական բոլոր կրից ու խորհրդոց արտայայտութիւնք:

Երաժիշտ. — Բայց վրձինը չէ՛ կարող գերազանցել զընթերցան. ոչ իսկ գլխովին հաւատարեւ նմա. պատկերն, ամէն առաւելութիւն ի հաշուի գնելով, մարդկային ձեռագործ է, թերի է. արեւու լուսոյն տարրական գոյները զարմանալի բաղադրութիւն մը կ'առնեն իրենց տարօրինակ եւ անբացատրելի շարժմամբ. երբեմն արծաթափայլ, երբեմն ոսկեհոտ կ'երեւին, այլ ընտելագոյն նկարք հազիւ անոնց ընդադրոտ նմանութիւնն են. ուշագրի ու երկար տեսնելու մ'անոնց մէջ մեղադարձ լուսութիւն մ'իւ անշարժութիւն մը կ'ընդհարէ. ձայնն, ընդհակառակն, շարժում, կենդանութիւն է. անով՝ կը դրդուն մարդիկ զիւցազնական առաքինութիւններ կամ անանական բարբարոսութիւններ գործելու, խռն ու վհատեալ զինուորն իւր քայլերը կ'երազէ և թշնամոյն դէմ կը խուժէ մահն անարգելով, մայրն իւր սրտին հատորիկը քնոյ թեւերուն վրայ կը հանգչեցնէ, տառապան իւր ամբողջ մարմինը տարող սիրոյն ողջոյն կը զրկէ ընկերին, բարեկամն իւր սիրելոյն կորուստը կ'ողբայ և աղօթողին սիրտն երկնաւայ ամպերէն վեր կը բարձրանայ դէպ ի բնութեան արարիչը: Որովո՞ւս իւր քնարով կ'ամռքէ վայրի գաղանաց կառաղութիւնն և թռչնոց մոռցնել կուտայ իրենց բոյնը. երաժշտութիւնն անձառեւոյն մարմնացումն է, երկնից ու երկրի յօդակապն է: Նա կը շարժէ մեղաւորին սիրտը՝ դառնալու համար իւր չար ճանապարհէն: Նա շատ անգամ հոգեւորին հետ մարմնաւոր ախտերն ալ կը բժշկէ, կամ գէթ կ'ամռքէ. Դաւիթ տաւրի կը հնչեցնէր Սաւուղի յիմարութեան վայրկեաններուն:

Երգիչ: Յ. ՊԱՆԸՔԵԱՆ

ԾԱՂԱՍՅՑ ԼԵՁՈՒ

Ահա թէ իւրաքանչիւր ծաղիկ ինչի՞ խորհրդանշան է:

- Շագանակ, շաղկութեան.
- Շագանակեմի, « արդարութիւն ըրէ ինձ » ըսելու.
- Շահմեամ (գարնեփիլ), « գաղաղութեան մէջ հաւատարմութիւն » ըսելու.
- Շահպուրակ, (չհայոյ), անթաւամ գեղեցկութեան.
- Շրկասակ, (կիւղէլ ավրատ օթու), ստուերութեան.
- Շողգամ, գթութեան.
- Շուշան, բոցոյ.
- Շրէ, (չիլիզ օթու), յարգանաց.
- Ոգորի, (տեսակ մը սուր, սէօյիւտ), անկեղծութեան.
- Ողկուզուկ, (կիրիտ օթու), ծննդեան.
- Ոսկի ցարգէս, (փուլիս), փոխադարձ սիրոյ.
- Որթ (խաղողոյ), արեցութեան.
- Որոմն, մալութեան.
- Ուղտափուռ, վատութեան.

Ս. Գ.

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԲԺՇԿԻՆ

ՈՐՈՎԱՅՆԻ ՊՆԴՈՒԹԻՒՆ. — « Բնաւ ախորժակ չունիմ, թէ և շատ քիչ կուտեմ, բայց կերածս դժուարաւ կը մարսեմ: Շատ անգամ գլուխս կը ցաւի: » Այս գանգատները կ'ընեն շատ անձինք, մանաւանդ կանայք: Բոլոր այս հիւանդութեանց — որք ամիսներով և նոյն իսկ տարիներով չեն անցնիր՝ եթէ չգարմանուն — ամենէն սովորական պատճառն որովայնի պնդութիւնն (գալլը) է: Այն անձինք՝ որոց փորը 2, 3, 4 օրը անգամ մը, երբեմն ալ աւելի ուշ, կը քակուի, սովորական աղի լուծողականներ կը գործածեն. գրեթէ կ'ընեն, այսու հանգերձ որ և է օգուտ չեն տեսներ: Պատճառն այն է որ աղի լուծողականք փորը հանելէ վերջ պնդութիւն կուտան. իսկ գըրեմները սովորաբար աղեաց ստորին մասին վրայ միայն կը ներգործեն և շատ անգամ ապարգիւն կը մնան:

Ուրեմն ի՞նչ միջոցաւ կարելի է բուժուիլ այս ախտէն: — Ամէն օր պարտելու է, մանաւանդ կերակուրէն առաջ. օրուան գոնէ մէկ ճաշին ուտելու է եփած կանանչեղէն ինչպէս սպանախ, եղբրդ (rawspinach), ջրկոտիմն (սալ բլէրսի): Միտը անճարպ ըլլալու է և արիւնտ:

ԴՍՐՄԱՆՈՒՄՆ. — Նախ հնդիկ իւղ (հիլիս եաղի) առնելու է (40 կրամ), հետեւեալ օրէն սկսեալ՝ ամէն երեկոյ պառկելու միջոցին մէկ ապուրի դգալ կտաւատի (էէ. քէն քօսուսու) ջուր առնելու է (կտաւատը 10 վայրկեան գաւաթ մը ջուրի մէջ ձգելու է, թէ՛ ջուրը և թէ՛ կտաւատը խմելու է): Եթէ այսչափով ամէն առտու կանոնաւորապէս փորը չ'ենէ, ցերեկուան և առտուան ճաշերուն ալ խմելու է նոյն դեղէն: Երբ փորը կ'սկսի կանոնաւորապէս ելնել, դեղին չափը հետզհետէ քիչցնելու է, իսկ 15 օրէն կարելի է բոլորովին դադարեցնել գործածութիւնը: Նորէն պնդութիւն եկած տառն՝ դարձեալ նոյն դեղէն առնելու է:

Յ. Թ. Հ.

ԶԲՕՍԱՆՔ

ԹՈՒՍԱՅԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ. Արարացի մը մեռնելով իւր երեք որդեաց 17 ուղտ կը թողու իւր միակ ժառանգութիւն. կտակին պայմանները հետեւեալներն են. Անդրանիկը կէսը պիտի առնէ. երկրորդը՝ երրորդմասը. կրտսերը՝ իններորդ մասը. բայց այն պայմանաւ որ 17 ուղտերը ողջ եղած տառն պիտի բաժնուին:

Առաջին գանողին միամսեայ Ծաղիկ պիտի նուիրուի:

ՀՈՂԸ ԵՒ ՀՈՂԱԳՈՐԾԸ

Գործնական հրահանգ մայիս ամսոյ համար

Բանջարեղիկաց պարտէզ. — Ամսոյս մէկէն մինչև եօթն, տնկել սոխ (արփածը սօղանը) բանջար երկրորդ անգամ, ստեպլին, ազատքեղ, բակլայ և բաղուկ (փաղը), որոնցմէ եթէ կանուխն տնկուածներ կան, արմատներու հօղն փորելու է պղտիկ բահով մը և կտտարեալ զգուշութեամբ: Ամէն տեսակ լուբրաներ (չալը, այլիչ քատըն,

պարսպունեա և ֆրէշկ) կրնան անկուրի մինչեւ օգոստոսի սկիզբները: Կրնայ անկուրել տակաւին երկու անգամ՝ ոլուն (պօտուր պէզլիա): Սեբերը եթէ չառ չորը ըլլան, վերայիւնալ բանջարեղինաց առատ ջուր առ չարկ կը լինի: Ամսոյս եօթնէն մինչեւ վերջն կը անկուրն, ամէն տեսակ պատինձաններու, տոմարներու, կարոսներու սուեններն, պամիա, փրփրեմ (սէմիզ օթու), ընդաւոր կաղամբ, բողկաղամբ, վայրի չաղար, պրաս և բողկ իւր մանրածեւ և կարմիր տեսակներով, Բանջարեղինաց պարտէզին համար կարեւոր են հետեւեալ աշխատութիւններն: Կանխաւ անկուրած կաղամբներն բարձրու վրայէ հանելով տնկել խորապէս փորուած և լաւ կերպիւ աղբով ծածկուած տեղեր: Սաշպ, սաշպ ջրեւ կարոսներն, որք, եթէ պարտիլին դիրքը կը ներկ, պէտք է կէս կէս կանգուն հետի տնկուած ըլլան իրարմէ: աւելի լաւ կ'ըլլայ եթէ ասոնք տնկուին աւազաններու շուրջն կամ խոնաւ տեղեր: Այս կերպով յառաջ բերուած կարոսներու թէ՛ արմատներն հասարակէ կ'ենթէ՛ տերեւներն ընտիր կ'ըլլան: Դեռուներու վրայէ այլ ևս վերցնել անոնց գիշերային ծածկոցներն: ջրեւ, երկու անգամ, գարիի և ցորենի արտերն, և գարնեալ ջուրը բոսա պակաս չընեն լրինձի արտերէն:

Այս ամսոյ մէջ կարեւոր է նաեւ թեթեւապէս փորել և մաղել կախաւ տնկուած բազալի շուրջը գտնուած հողն: Ժամանակըն է նաեւ տեղափոխելու այն մատաղ բանջարեղիններն, որոնք անհրաժեշտ պէտք ունին այդ աշխատութեան: Կարեւոր է գիտնալ թէ այս տեղափոխութիւնն կատարելու է միայն և միայն արեգակը մարը մտնելէ վերջ:

Յ. Մ. ԱՋՆԱԽՈՐԵԱՆ

ՄԵՐ ՀՈՐԻՋՈՆԷՆ ԴՈՒՐՍ

ԳԵՐՄԱՆԻՈՅ խորհրդարանին լուծման առթիւ եւրոպայի մէջ մտքերը սաստիկ յուզուած են: Երկրի գաղնակցութեան բարեկամ ու հակառակորդ թերթեր իրենց յատուկ տեսակէտներով կը քննեն այս խնդիրը, ցաւելով լուծեալ խորհրդարանին անպատեհ ընդդիմութեան վրայ, կամ շնորհաւորելով զայն՝ որ վերջապէս երկրին վիճակն ու պէտքերն ըմբռնելով՝ մերժեց այս անգամ բանակի թուոյն ու ծախուց համար խնդրուած յաւելումը: Նախարարապետ Պ. Բաբերիփի ջանացած էր երեսփոխաններն համալել թէ 60,000 նոր զինուոր աւելցնելով Գերմանիա կարող պիտի լինի ո՛ր և է թշնամուց դիմագրաւել և յարձակողական դերք շունենալ պատերազմի առեւն, թէ Գաղիա այլ ևս չէ կարող աւելցնել իւր բանակին թիւն ու հետեւաբար զինուորական գերակշռութիւնը պիտի մնայ Գերմանիոյ, երեսփոխանք անհամադրելի մնացին, կամ խորհելով թէ Գաղիոյ համար ալ դժուար պիտի չլինի նոյնքան զօրք աւելցնել բանակին արդի թուոյն վրայ, ինչպէս եղած է ցարդ, կամ խորապէս ըմբռնած լինելով թէ Գերմանիոյ ժողովուրդը ծանր տրոյց ներքեւ կը տառապի արդէն և աւելի զոհողութիւն ընել իւր կարողութենէն վեր է: Նոր խոր-

հրդարանի ընտրութեանց ձեռնարկութիւնք սկսած են արդէն և առ ընտրողս ուղղեալ յայտարարութիւնք կը տեղան զանազան կուսակցութեանց պատկանող ընտրելիներու կամ ընկերակցութեանց կողմանէ: Խնդիր է թէ նախորդ խորհրդարանի անգամք, գիտնալով որ զինուորական օրինադիրը մերժելով լուծում՝ պիտի արտասանուէր իրենց դէմ, վստահ էին որ ազգային կամայ համաձայն վարուած պիտի լինէին: այս մասին նոր ընտրութիւնք պիտի արտասանեն վերջին բառը, և մեք պիտի ստիպուիմք սպասելու որ գումարուի գալիք երեսփոխանութիւնը, ներկայացուի մերժեալ օրինադիրն և ընդունի վերջին վճիռը:

ԳՄԱՂԻՍ, իբր անտարբեր, հանգիստեա կը լինի գերմանական այս կացութեան: մանաւազ թէ տարբեր գործերով զբաղուած կը ցուցնէ զինքը: Արեւմտեան Ափրիկէի մէջ Տահմի երկրին արշաւանաց պետ զօրավար Տոստի ի Մարտէյլ ժամանումը ցնծութեամբ կ'ողջունուի ժողովրդեան և պետութեան կողմանէ: աւելի ջերմագին ընդունելութիւն կը կատարուի ի Բարիլ, ուր կը կարծուէր թէ բնակչաց մեծամասնութիւնը դէմ է հեռաւոր երկրակալութեանց: Իրաւ է որ քաղաքական կնճիռներու այսպիսի ժամանակի մէջ զօրավար Տոստի նման կարող ու փորձ զինուորականի մի Գաղիա ժամանումը ցնծալից դէպք է Գաղիացոց համար: Անձրեւներն ուր ուրեմն սկսան տեղալ երկրին ամէն կողմն և երկրագործաց սիրտն հանգիստ ու դէմքը դուարթ է այժմ:

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ նախարարութիւնն անվերջօլ յառաջ կը տանի իւր հակակշեւական ձեռնարկները, արդէն երեսփոխանաց ժողովոյն ընդունել տուաւ քաղաքային ամուսնութիւնը, ինչպէս եւ Հրեայներն իբրեւ ուրոյն կրօնական հասարակութիւն ճանչնալու յատկացեալ օրինադրեր: Մերակոյսը կը պարսաւէ նախարարութեան այս ընթացքը, բայց իւր բողոքն անլսելի կը մնայ:

ՌՈՒՄԻԱ յանկարծ կը յիշէ թէ 62 տարի առաջ արդի Ռումանիոյ Մօլաւ մասին 21 միլիոն բուսլի փոխառուութիւն ըրած է, և տակոսով կը պահանջէ զայն Ռումին կառավարութենէն: Կամ վճարելու կամ կարգադրութիւն մ'ընելու է: ԱԻՍՏԱՆԻՍ, ինչպէս և ՄԻՍՏԵԱՆ-ՆԱՀԱՆԳՆԵՐԸ, շնորհալի զեկուցումներ կ'ուղարկեն ի հին աշխարհն: սնանկութեանց տարափ մը: առ այժմ իբր 40 միլիոն ոսկի ընդհանուր կորուստ, որու մասն համարելու է նաեւ ԱՆԳՂԻՈՅ մէջ պատահած սնանկութեանց պատճառած կորուստը: Եւ այս ամէնէն մենք ալ կը տուեալինք: երկաթուղոյ բաժնեկիցութեան մինչեւ 95 ֆրանքի բարձրանալէ յետոյ կ'ընան 88 1/2 ի, նոյն համեմատութեամբ նաեւ միւս թիւթերը:

Ա. Ա. ՍՈՒՐԵՆԵԱՆ

ՎՐԻՊԱԿ. «Ծաղիկ» ի վերջին թուով հրատարակուած Տօք. Գ. Սեւեան փաշայի Տեսիլ ստանաւորին մէջ, «սերտ» բառը պէտք է կարդալ «սերտ» նոյնպէս, «Եւ մանաւանդ այն շքեղ երաժշտաց արուեստ նուրբ» տողէն յետոյ պիտի դուրի հետեւեալը. «Յանձին իմում բովանդակ սիրտ և հոգի այրէր հուրը»:

ՅԱՂԹԱԿԱՆ ՀԵԾԵԱԼԸ

Գառը գիւղի բնակիչներէն Քիրեաքօ՝ անմխիթար սգոյ մէջ ինկու, երբ անցեալները Մուսթաֆա էֆէնտի անուն անձ մ'իր հեծած իշուս վրայէն լընցուց զինքն, յայտարարելով որ ինք տէրն է այդ իշուս զօր կորուսած էր ասորիէ մ'ի վեր:

Խնդիրն Լուսիւսարի պատմական դատարանին կը ներկայանայ: Քիրեաքօ թէ՛ հըը կը կորսնցուցէր և թէ՛ իւր գոլ կ'ամբաստանուէր:

Մուսթաֆա էֆէնտի կը պահանջէր կենդանին, զօր, կըսէր թէ՛, գնած է երեք տարի յառաջ՝ երբ նա մէկ տարեկան էր: Իսկ Քիրեաքօ կը պնդէր որ հըը ծնած օրէն այսինքն երեք տարիէ ի վեր իւր սեփականութիւնն է:

Թեր ու դէմ բազմութիւն անձինք կը ըլլան: ամենք իշուսն Մուսթաֆա էֆէնտիին՝ ամենք ալ Քիրեաքօինն ըլլալուն վկայութիւն կուտան:

Խնդիրը հետգնեալ կը պլուտիւր: Դատարանը նկատելով որ, ըստ Մուսթաֆայի, հըը չորս տարեկան լինելու է և, ըստ Քիրեաքօյի, երեք տարեկան, տարիք որոշելու խնդիրը կը յանձնէ ձեռնհասօրյ որք միտքան կը յայտարարեն թէ հըն երեք տարու է: Հետեւաբար Քիրեաքօ կ'արդարանայ և դատարանին բաղը կ'ապուած իւր իշուս վրայ հեծնելով ուրախութեամբ ու յաղթական կը դառնայ ի Գառը գիւղ:

Թ. Ղ. Թ. Ա. Կ. Յ. ՈՒ. Թ. Ի. Ի. Ն.

ԵՐԶՆԿԱՅԷՆ. — Չմեռը և մինչև վերջերս տեղացոյ առատ ձիւնն այս տարի խիստ աղետաբեր եղան: Քօլէրայի պատճառած ահ ու սարսափն հազիւ մոռցուած, ահա վրայ կը հասնէր արմատաց տարապայման սղութիւնն, որ առաւելապէս կը ծանրանար աղքատ ժողովրդեան վրայ: Ամսէ մը ի վեր կը տեսնեմք չրջակայներէ (Կերջան, Բաբերդ, Կամախ, Գայլ գետ, Քղի, Լայլն) հասած թշուառ արարածներ բոկոսն և կիտամերկ, որք հաց կը մուրան: Միայն իրենք չեն որ կը նեղուին նօթութեան, անասուններն ալ՝ որք իրենց պաշարն սպառել են երկարատեւ ձմրան միջոցին և այս պահուս կ'արածին երկաշի գաշտին մէջ: Շրջակայ լեռանց ձիւնաթայր շղթայներն հազիւ ամսէ մը կրնան բացուիլ և այն ատեն կ'սկըսի Եփրատի ջուրը աճումն: — Յօրենի ընտիր տեսակին 12 քաշը 9-10 զրէն բարձրացած էր 19-20 զրէն: գարին 10 1/2-11 քաշն ալ 4 էն մինչեւ 16 զրէն: Բարեբաղդաբար այս շարժու տեղացոյ առատ անձրեւը գնոց զգալի անկում պատճառեց և փառապէս սովու մօտալուտ երկիւղներն, որք հաղորդակցութիւններէ զուրկ գիւղերու մէջ կրնային պատահիլ: — Գարնան հետ կը վերըսկսին երկրագործ դասուն վարուցանն և ուրիշ մշակական աշխատութիւններ: ամէն տարի շատոնց ի վեր երկրագործը ցանած էր իւր սերմերն: ձմեռն այս տարի ամէն հաշիւ տակն ու վրայ ըրաւ և երկրագործը չպիտի կրնայ ուրիշ կարեւոր զբաղմանց պատճառաւ ծառ տնկել մեծ քանակութեամբ, ինչ որ քսան տարիէ ի վեր սկսած է ընել, երկաշի գաշտը ծառաշատ պարտէզի մը փոխարկելով:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատգամաբաւթիւնք. — Ճանիկ գաւառին Իտարէի ժողովոյ նախորդ առաջին քարտուղար Իպրահիմ Պէսիմ էֆէնտի՝ Տըրապիզդին թրէմէ գաւառական գալմաթամ, Համայն նախնական դատարանին պատժական ճիւղին նախագահ Ապա-իւլ-ֆէթիմէ էֆէնտի՝ Տիարպէթիւրի նախնական դատարանին ընդհանուր դատարանի օգնական, Պորաուրի նախնական դատարանի պատժական ճիւղին նախագահ Էօմէր Եօմմի էֆէնտի՝ Կեսարիոյ նախնական դատարանի պատժական ճիւղին նախագահ, Միւնթէֆիզի նախնական կառավարիչ Եհնէա Նիւզէթիւլէյ՝ Եղեսիոյ կառավարիչ, Արշլապէզդուսի կղզեայ նահանգին Մէքթուպէի ֆէնտի էֆէնտի՝ Ատանայի նահանգին Մէքթուպէի անուանեցան։

— Քաղ. ժողովոյ Ատենապետ Մաքսուտեան Սիման պէյի Իմրիազի ոսկի չքաղբրամ շնորհուեցաւ։

— Բ. կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ մայրաքաղաքիս պարսկական դեսպանատան առաջին քարտուղար Արթարի խան Նէվրուզի։

— Նախնիքաց շարժումն թերթին մէջ մոռցած էինք յիշատակել թէ Վեհափառ Սուլթանը, գնահատելով Ոսկերիչ Չրաճեան Յարութիւն էֆէնտիի հաւատարմութիւնները, չորրորդ կարգի Օսմանիէ շնորհած է նմա։

— Դաւաւներէ եկած տեղեկութեանց համաձայն, հակառակ դարնան եղանակին՝ առէն կողմ ձմեռ կ'ընէ։

— Եւրոպոյ նահանգին մէջ տիրած երաշտութեան հետեւանօք ցորենի ու ալիւրի համար նեղութիւն տիրած լինելով, Վեհ. Սուլթանի հրամանաւ՝ Սամսոնի ու Ամասիոյ ալիւրի գործարաններէն 400,000 օխտ տլիւր պիտի զրկուի ի Կարին, պայմանաւ որ այդ ալիւրները հետզհետէ ծախուելով՝ մէկ կողմանէ գրամները հատուցուին։ 260,000 օխտ ալիւր ալ Կարնոյ զինուորաց համար պիտի զրկուի։

— Կեդրոսն բանալ ուղղել իւրաքանչիւր գեղապարծ, վերջին որոշման մը համաձայն, առ նուազն 100 ոսկեայ դեղ և դեղագործական գործիներ պիտի ունենայ, իրաց առեալ դեղարանին մէջ գտնուած դարակներն և յս որոշում գործողութիւն է հին և նոր դեղարանաց, նոր բացուելիք դեղարանաց, որ և է պատճառով փակուած և յետոյ վերստին բացուելիք դեղարանաց, ինչպէս տեղէ մը ուրիշ տեղ փոխադրուելիք դեղարանաց համար, Ամէն դեղարանին մէջ անպատճառ պիտի գտնուին այն դեղերն, որք դեղագործաց արհեստագետներուն եւ քաղաքային բժշկական ժողովոյ կողմանէ պատրաստուած ու կայսերական կառավարութեան կողմանէ բնդուեալ տաճարին մէջ նշանակուած են։ Այդ տաճարին մէկ օրինակ հաղորդուած է բոլոր դեղագործաց, Անոր մէջ նշանակուած դեղերը չունենալ դեղագործք բոտ օրինի պիտի պատժուին։

— Ճօնօրի վեհապետ Ապուպէթիւր խան հինգ շարժի երկուցեան կառավարմամբ մայրաքաղաքէս մեկնեցաւ ի Վիէննա։

— Հանգրուտ շինութեանց նախարարութիւնը անցեալ տարի հնարիչի 63 արտօնագրեր տուած է, որոցմէ 49ը օսմանեան հպատակներու և 42ը օտարականներու։

— Տիարպէթիւրի մէջ նոր ընտրութիւններ կատարուելով, Ապուլապաթի փաշա, Գալապեան Յովսէփ էֆէնտի, Հաճի Սէյֆուլլահ էֆէնտի և Մինասեան Յովհաննէս էֆէնտի անդամ ընտրուեցին Իտարէի ժողովոյն, Սուպհի, Հինտիպատէ Նէճիպ, Հաճի Հասիպ և Սանասեան Կարապետ էֆէնտիք՝ վերաքննիչ ատենի Հուգուզի ճիւղին, Ճէմիլ Փաշապատէ Մուսթաֆա պէյ, Ջիհնի, Բիրինջճիպատէ Արիֆ և Պոյաճեան Յովսէփ էֆէնտիք և Մուսթաֆա պէյ՝ վերաքննիչ ատենի Պատժական ճիւղին, Հաճի Իպրահիմ և Չրաճեան Սաեփան էֆէնտիք՝ նախնական դատարանին։

— Անտապ, հանքաց և երկրագործական նախարար Սէլիմ Մէհմետ էֆէնտի Բ. Դուռնէն արտօնութիւն խնդրած է գաւառաց համար անտապ և հանքաց վեց քննիչներ կարգելու։ Մինչեւ որ այդ քննիչք անուանին, երկրագործական քննիչք պիտի հսկեն նաեւ անտապ ու հանքաց վերաբերեալ գործերու վրայ ևս։ Վսեմ, նախարարին կողմանէ պատրաստեալ անտապ պահպանման յատուկ ծրագիրն, որ Բ. Դուռնէն մատուցած էր, կառավարական անտառներու համար պիտի գործադրուի, իսկ մասնաւորաց սեպհական անտառները պահպանելու նպատակաւ որոշուած է որ անտապ աւերուիմ յառաջ բերող եղանակաւ ծառեր չկտրուին։

— Կ. Պալադ Արուեստահանդիսին շէնքին կառուցման համար մասնագէտներ պիտի բերուին Եւրոպայէն։ Շինութեանց և կարգադրութեանց համար լինելիք փոխառութեան գիւմար՝ հասցիմ ցոյց պիտի տրուի, Շիրքէթի Սայրիյէի կողմանէ արուելիք տարեկան 6000 ոսկիէն զատ, Թրամուէյի ընկերութեան, Իտարէի Մախսուէի և Բուսէլիի ու Անտառուի երկաթուղեաց երթեւեկի գիններուն, ինչպէս նաեւ Էսնաֆ Թէս-էլ-Էսլիի ու Թարուի վրայ եղած յաւելումներով գոյանալի 22-23,000 ոսկեայ գումար մը։ Արուեստահանդիսի յանձնաժողովոյն և Օսմ. Պանքայի միջեւ հաշուքիմաց մը պիտի բացուի և նոյն հաղորդները մէկ կողմանէ պանքային պիտի յանձնուին։

ՍԶԳՍՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Խառն ժողովն ընդունած լինելով Տ. Մեքրիսեդէկ Ս. Արքեպիսկոպոս Մուրատեանցի հրաժարականն յառաջնորդութեանէ Տիարպէթիւրի, տեղւոյն քահանայներէն մին առաջնորդական տեղապահի պաշտօն պիտի վարէ ցընտրութիւն նոր առաջնորդին։

— Ստուգեցինք որ Տ. Բարթուղիմէոս է. Արքեպիսկոպոս հրաժարական չէ ի Պրուտա, այլ միայն Ս. Պատրիարք Հօր։ Հետեւաբար սխալ է այն տեղեկութիւն թէ Պրուտայի Գաւառական ժողովն ընդունած լինի Նորին Սըրբազանութեան հրաժարականը։

— Կարնոյ Առաջնորդը Կարնոյ սովետաց համար օգնութիւն խնդրած է Պատրիարքարանէն, որ խնդիրը յղած է Նախկին սովետաց յանձնաժողովոյն։

— Դատը գիւղի թաղ. Խորհրդոյ մնացեալ երեք անդամաց ընտրութիւնը կիրակի օր կատարուելով, ընտրուեցան Գրիգոր էֆ. Նազաշեան, Խաչիկ էֆ. Կամարական և Թովմաս էֆ. Աւետիսեան։

— Պէշիկթաշի թաղ. Խորհրդոյ անդամք են՝ Ալիքսան էֆ. Խօրասանճեան, Բարսեղ էֆ. Կիւլպէնկեան, Գասպար էֆ. Խիւտապէրտեան, Թովմաս էֆ. Խընաամեան, Խաչիկ էֆ. Խօրասանճեան, Մաքսուտ էֆ. Խիւտապէրտեան, Յովհաննէս էֆ. Կիւմիւշեան, Տրդատ պէյ Տատեան և Քերովբէ էֆ. Կիւմիւշեան։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՐԴԱՏ ՎԱՐԴ. ՊԱԼԵԱՆ (Առաջնորդ հայոց Կեսարիոյ). ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՅ Ի ԹՈՒՐԻՒՄ. Հատոր Ա. Տեսութ. — Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Ասուածամնայ եկեղեցւոյն Կեսարիոյ եւ Ս. Գեորգ եկեղեցւոյն Գրեքիի։ Գին 7 դրուշ։

ՏՐԴԱՏ ՎԱՐԴ. ՊԱԼԵԱՆ. ՍՈՒՐԻՔ ԵՐԿԻՐ. Նկարագրութիւն Ս. Երուսաղէմի եւ Սեբաստիայի տաճարաց. Հատոր Ա. Տեսութ. Գ. — Գին 3 1/2 դրուշ։ — Ամբողջ գործը պիտի բաղկանայ երկու պատկերազարդ հատորներէ 800 երեսով, Բաժանորդագինն է Պոլսոյ համար 25, գաւառաց համար 30 դրուշ։

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ. ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՆՈՒԱԳՆԵՐ. Բ. տպագրութիւն՝ Արծրունի Տէր Գեորգ քահանայի և Սրբուհի Մայրապետի պատկերներով, Գին 2 դրուշ։

Յ. ԴՈՒՐԴԷՆ. Պատկեր աշխարհիկ գրականութեան. Հատոր Բ. Տեսութ. Ա. և Բ.։ Գին իւրաքանչիւր տետրի 100 փարա։

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ. Տաղք և բաներգութիւնք. հրատարակուեցաւ 43րդ թերթը։

Ձ Ե Կ Ո Ւ Յ Ո Ւ Մ

Կ'երևի թէ մեր գաւառական բաժանորդներէն ոմանք միւրուր լինան ով իրենց բաժանորդագինն հատուցանել մտադիր են. միանգամ ընդ միշտ կը յայտարարեմք թէ այդ անսակ վճարում մեր գործին չգար. թերթերուն ուղարկումը պիտի դադարեցնեմք եթէ այդ անձինք այս օրէն սկսեալ մինչեւ միամիս յապաղեն զրամի առաքումը. այդպիսեաց հետ ի վերջոյ մեր ընտրած եղանակաւ պիտի վարուինք. մեղքն իրենց վիղը։

Ա Ր Ժ Է Ք Դ Ի Ս Մ Ո Յ

Ում. իւրան 100 դրշ. Եւ

Մէքրիսեյէ	107 32	Վ. Կընոյ	101
Քատարգ մէքիս	107	Բուսիւր Բօյ	90 20
Մանր մէքիս	102 30	Նաբոյէան	87 33
Մէթալիք	96 20	Գրիմից	51 16
Հինգնոյ	100 30	Անգլ. լիւր	110 16

Մանէթ թղթադրած 8 73

Գանալիտէ	23 35	Բուս. երկ.	89 1/4
Թահվիլ. Ում.		Թատալիէ	

ԱՐՏՈՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆԵԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Իսկի-Ջապիէ փողոց, թիւ 61